Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 896 - Ա
որոշման

«ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ԳԹՈՒԹՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ» ԲԵԹԼԵՀԵՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ
ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՄՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Դժվար քայլող երեխաների համար տեղաշարժի հեշտացման, անվտանգության ապահովման և կյանքի որակի բարելավման համար «Մայր Թերեզայի գթության քույրերի» Բեթլեհեմ երեխաների խնամքի կենտրոնի ենջասենյակների, խաղասենյակի, միջանցքների, սանհանգույցի վերանորոգման և անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հնդկաստան, Կալկաթա մայր տուն «Միսիոներների Բարեգործական կազմա-կերպություն» (Կալկաթա,Վեսթ Բենգալ, 54Ա, Բոսե Ռոուդ)
4.	Ծրագիրը կատարողը	«Միսիոներների Բարեգործական կազմակերպության» հայկական մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Նորք – Մարաշ, Լուսինե Զաքարյան փողոց, տուն 37-39, ՀՎՀՀ՝ 06924578)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Լուսինե Զաքարյան 7-րդ փողոց, տուն 37-39 «Մայր Թերեզայի գթության քույրերի» Բեթլեհեմ երեխաների խնամքի կենտրոն, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	14,288,100 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	«Մայր Թերեզայի գթության քույրերի» Բեթլեհեմ երեխաների խնամքի կենտրոնի տակ գտնվող թվով 19 առանց ծնողական խնամքի մնացած ֆիզիկական և մտավոր արատ ունեցող երեխաներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2025 թվականի մարտի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Խնամքի կենտրոնի 1-ին մասնաշենքի, 1-ին հարկի ննջասենյակների, խաղասենյակի, միջանցքների, սանհանգույցի վերանորոգման և անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցում 14,288,100 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2025 թվականի մարտի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայություն-ների, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և նախատեսվող գինը	Խնամքի կենտրոնի 1-ին մասնաշենքի, 1-ին հարկի ննջասենյակների, խաղասենյակի, միջանցքների, սանհանգույցի վերանորոգման և անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցման աշխատանքների իրականացում՝ 14,288,100 դրամ առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

19.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ